Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունվարի 29-ի N 50 - Ն որոշման

Ձև

Հ Ա Յ Տ

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտատու _____
(իրավաբանական անձի անվանումը և կազմակերպաիրավական ձևը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, (առկայության դեպքում) կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում)

Գտնվելու վայրը
_____
(իրավաբանական անձի գտնվելու կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի բնակության վայրը)

Գործունեության իրականացման վայրը (հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը) և հեռախոսահամարը
_____
(լրացվում է հայտատուի ցանկությամբ)

Հյուրանոցային տնտեսության օբյեկտի անվանումը, տեսակը
_____
Ակնկալվող որակավորման կարգը _____
_____

Իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____

Հետադարձ ծանուցման եղանակը (առձեռն, էլեկտրոնային, փոստ)՝
_____
(դաշտը լրացվում է հայտատուի ցանկությամբ)

Խնդրում եմ տրամադրել հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգ:

Հայտին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտը ներկայացնելու պահից ոչ ավելի, քան 10 տարի առաջ ուժի մեջ մտած հյուրանոցային տնտեսության օբյեկտի շահագործման փաստագրման ակտը՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, տեխնիկական անձնա-

գիրը՝ քաղաքաշինության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան, կամ շահագործման ենթակա լինելը հավաստող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթուղթ.

2) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հրդեհային անվտանգության պահանջներին հյուրանոցային տնտեսության օբյեկտի համապատասխանության մասին հրդեհային անվտանգության բնագավառում լիազոր մարմնի եզրակացություն՝ տրված ոչ շուտ, քան հայտը ներկայացնելու պահից 30 օր առաջ.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի եզրակացությունը սանիտարահամաճարակային անվտանգության ապահովվածության մասին՝ տրված ոչ շուտ, քան հայտը ներկայացնելու պահից 30 օր առաջ.

4) հյուրանոցային տնտեսության օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ հայտատուի սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը.

5) այլ փաստաթղթեր (հայտարարատուի ցանկությամբ):

Որակավորող մարմին ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Հայտատու _____ _____
(պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ